


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. դեկտեմբերին


/վերլուծություն/

2012թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 18170 գործարքներ, որոնց քանակը 2012թ. նոյեմբերի համեմատ աճել է 15.6%-ով, իսկ 2011թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 18.9%-ով:

2012թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4767 օտարման գործարքների 78.7%-ը կազմել են առուվաճառքները, 21.0%-ը՝ նվիրատվությունները և 0.3%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.1%-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.9%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2012թ. դեկտեմբերին, 2012թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 10.7%-ով, իսկ 2011թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.2%-ով:

2012թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 54.1%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. դեկտեմբերին, 2012թ. նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 18.9%-ով, իսկ 2011թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 0.8%-ով:

2012թ. դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	դեկտեմբեր 2011թ.	դեկտեմբեր 2012թ.	նոյեմբեր 2012թ.
Կենտրոն	426395	421000	420300
Արաբկիր	339761	349500	348000
Քանաքեռ-Զեյթուն	264833	278000	277000
Նոր-Նորք	229554	242850	241050
Ավան	239224	250000	249000
Էրեբունի	233915	242600	242000
Շենգավիթ	231482	248200	247000
Դավթաշեն	256476	268500	267500
Աջափնյակ	227193	239000	237500
Մալաթիա-Սեբաստիա	224419	234100	233100
Նուբարաշեն	147187	145000	143500
Միջինը Երևանում	256400	265300	264200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. դեկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. նոյեմբերի համեմատ, աճել են 0.4%-ով:

2012թ. դեկտեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 396 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. նոյեմբերի համեմատ նվազել է 9.4%-ով, իսկ 2011թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.7%-ով:

2012թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2011թ.	դեկտեմբեր 2012թ.	նոյեմբեր 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	108196	114000	113600
	Ապարան	50300	53000	52000
	Թալին	62800	61500	61200
Արարատ	Արտաշատ	91553	94200	94100
	Մասիս	107623	112000	112000
	Վեդի	99872	98500	98100
	Արարատ	72176	74500	74200
Արմավիր	Վաղարշապատ	143417	153200	153200
	Արմավիր	114475	119200	119100
	Մեծամոր	86581	86500	86500
Գեղարքունիք	Սևան	96477	99000	99000
	Գավառ	55535	57500	56100
	Մարտունի	105464	107400	107300
	Վարդենիս	34005	41500	40500
	Ճամբարակ	22800	25950	25000
	Վանաձոր	81456	87200	87200
Լոռի	Ստեփանավան	80115	74500	74500
	Սպիտակ	103267	99800	99800
	Ալավերդի	51183	53200	53100
	Տաշիր	45787	43900	43800
	Թումանյան	12500	11000	11000
	Շամլուղ	8300	8000	8000
	Ախթալա	19700	19800	19800
	Աբովյան	145527	153200	153100
	Նոր Հաճն	128165	128500	128500
Կոտայք	Բյուրեղավան	107500	107100	107100
	Եղվարդ	109828	109300	109300
	Հրազդան	57773	61800	61000
	Ծաղկաձոր	301487	292500	292500
	Չարենցավան	82762	84000	84000
	Գյումրի	100088	109300	109100
	Արթիկ	63094	65200	65000
Սյունիք	Մարալիկ	35782	39500	38400
	Գորիս	116339	116800	116000
	Կապան	89458	90200	90200
	Սիսիան	79784	88500	87200
	Մեղրի	68500	75000	73500
	Ագարակ	39700	44200	44000
	Քաջարան	105941	94300	94300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	81300	91400	89800
	Եղեգնաձոր	127208	118700	118200
	Ջերմուկ	85529	109200	107600
Տավուշ	Դիլիջան	92656	108700	108100
	Իջևան	113085	116000	116000
	Բերդ	49700	57200	55600
	Դեկտեմբերյան	40200	45700	44500
	Այրում	24684	28000	27100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. նոյեմբերի համեմատ, աճել են 0.5%-ով:

2012թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 550 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 160, մարզերում միասին

վերցրած՝ 390: 2012թ. դեկտեմբերին, 2012թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 16.8%-ով, ընդ որում Երևանում՝ 35.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 10.5%-ով: 2011թ. դեկտեմբերի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.7%-ով, ընդ որում Երևանում՝ 27.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 5.1%-ով:

2012թ. դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	դեկտեմբեր 2011թ.	դեկտեմբեր 2012թ.	նոյեմբեր 2012թ.
Կենտրոն	460000	470700	469100
Արաբկիր	370300	377400	376200
Քանաքեռ Զեյթուն	275200	290000	288100
Նորք Մարաշ	302200	313700	313100
Ավան	249700	266800	265700
Էրեբունի	220000	234400	233200
Շենգավիթ	239700	250600	250050
Դավթաշեն	258300	271100	269100
Աջափնյակ	237100	243800	243100
Մալաթիա Սեբաստիա	220700	234300	233200
Նուբարաշեն	144800	147300	146200
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	270700	281800	280600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. նոյեմբերի համեմատ աճել են 0.4%:

2012թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2011թ.	դեկտեմբեր 2012թ.	նոյեմբեր 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	130000	135000	134800
	Ապարան	53800	57900	56950
	Թալին	70000	68650	68650
Արարատ	Արտաշատ	103000	98800	98700
	Մասիս	113950	113800	113800
	Վեդի	96100	101000	100600
Արմավիր	Արարատ	89000	87500	87300
	Վաղարշապատ	161800	152300	152300
	Արմավիր	117000	106500	106500
Գեղարքունիք	Սևան	93850	94200	94200
	Գավառ	46900	55700	54600
	Մարտունի	96500	94500	94400
	Վարդենիս	38350	38000	37000
	Ճամբարակ	28000	28950	28050

Լողի	Վանաձոր	96900	98500	98200
	Ստեփանավան	79000	88200	88000
	Սպիտակ	109100	113600	113600
	Ալավերդի	40200	48200	48100
	Տաշիր	54150	51500	51100
	Թումանյան	13900	12000	12000
	Շամլուղ	11500	13200	13200
	Ախթալա	25200	29600	29600
Կոտայք	Աբովյան	153400	154700	154700
	Նոր Հաճն	132100	129800	129800
	Բյուրեղավան	109000	120000	120000
	Եղվարդ	120100	116100	116100
	Հրազդան	66900	81600	80800
	Ծաղկաձոր	307700	305000	305000
	Չարենցավան	78100	82500	82500
Շիրակի	Գյումրի	118400	117800	117600
	Արթիկ	67900	62900	62700
	Մարալիկ	40100	51150	50600
Սյունիք	Գորիս	127000	128400	127700
	Կապան	99800	98500	98300
	Սիսիան	88700	92500	91300
	Մեղրի	75800	81800	80300
	Ագարակ	48200	46700	46500
	Դաստակերտ	10000	11610	11610
Վայոց Ձոր	Վայք	82000	88000	86700
	Եղեգնաձոր	118500	116000	115400
	Ջերմուկ	116000	127000	124600
Տավուշ	Դիլիջան	103000	110500	109900
	Իջևան	129000	122000	122000
	Բերդ	58000	59000	59000
	Դեկտեմբերյան	46400	46100	46100
	Այրում	34800	34600	34600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. նոյեմբերի համեմատ, աճել են 0.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1707 միավոր /1504.20 հա/ հողեր, որից Երևանում՝ 102 միավոր /21.93 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1028 միավոր /1429.60 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.26 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 479 միավոր /45.46 հա/, որից Երևանում՝ 51 միավոր /7.99 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 163 միավոր /17.49 հա/, որից Երևանում՝ 45 միավոր /12.52 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 16 միավոր /6.75 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /1.17 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 17 միավոր /4.40 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 4 միավոր /0.50 հա/ ընդհանուր մակերեսով:

2012թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1464 միավորի /1409.49 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 83 միավոր

/20.24 հա/, նվիրատվության գործարքներ՝ 234 միավորի /91.61 հա/, որից Երևանում՝ 18 միավոր /1.51 հա/ և փոխանակության գործարքներ՝ 9 միավորի /3.10 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.17 հա/:

Հանրապետությունում 2012թ. դեկտեմբերին, 2011թ. դեկտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.2%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 19.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 16.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 23.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 720.42 հա, որից 717.38 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 22.5%-ը կամ 330 գործարքներ /237.57 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 21 միավոր /4.66 հա/, իսկ 76.8%-ը կամ 1124 միավորը /1150.13 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 62 միավոր /15.58 հա/:

2012թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 10 գործարք /21.79 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող											
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր			
									Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	0	0.00	0	0.00	3	2.06	18	2.60	3	0.26	3	1.17	35	5.20	21	8.96				
Արագածոտն	66	34.29	0	0.00	3	0.01	2	0.78	120	683.10	0	0.00	18	1.81	5	0.32				
Արարատ	13	5.84	2	0.13	14	1.16	15	0.36	105	70.28	0	0.00	55	4.81	3	0.06				
Արմավիր	10	14.37	0	0.00	3	0.27	6	0.03	126	122.95	1	0.06	63	6.05	5	0.02				
Գեղարքունիք	1	0.05	0	0.00	11	1.06	10	0.30	131	49.43	0	0.00	25	3.26	0	0.00				
Լոռի	3	1.19	0	0.00	10	0.06	9	0.08	23	17.93	0	0.00	10	0.85	4	0.03				
Կոտայք	31	54.14	0	0.00	13	1.08	12	0.65	103	50.05	0	0.00	62	4.42	11	0.40				
Շիրակ	1	0.07	3	0.57	4	0.12	2	0.06	37	40.52	0	0.00	21	1.94	4	0.37				
Սյունիք	7	95.09	5	4.33	3	0.46	3	0.33	44	52.08	0	0.00	3	0.27	0	0.00				
Վայոց Ձոր	6	5.23	0	0.00	7	0.80	2	0.09	11	3.91	0	0.00	5	0.59	6	0.13				
Տավուշ	10	8.29	0	0.00	6	0.68	7	0.13	22	12.44	1	0.20	26	2.21	1	0.03				
Ընդամենը	148	218.56	10	5.03	77	7.76	86	5.41	725	1102.95	5	1.43	323	31.41	60	10.32				

Ստորև ներկայացվում է 2012թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ օբյեկտներ ի հոդեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանա- կության հողերի		Գյուղ. նշանա- կության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ ա կան կառու ցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառու ցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	11	2.75	0	0.00	2	2.05	9	0.70	10	1.91	0	0.00	0	0.00	1	0.01	9	1.90
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	1.72	1	0.93	0	0.00	3	0.01	2	0.78
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	44	7.49	13	5.84	2	0.13	14	1.16	15	0.36
Արմավիր	4	0.07	0	0.00	1	0.06	3	0.01	15	14.60	10	14.37	0	0.00	2	0.21	3	0.02
Գեղարքունիք	1	0.003	0	0.00	1	0.003	0	0.00	21	1.41	1	0.05	0	0.00	10	1.06	10	0.30
Լոռի	6	0.08	0	0.00	3	0.02	3	0.05	16	1.25	3	1.19	0	0.00	7	0.03	6	0.03
Կոտայք	1	0.10	0	0.00	1	0.10	0	0.00	54	55.74	30	54.11	0	0.00	12	0.98	12	0.65
Շիրակ	2	0.024	0	0.00	1	0.004	1	0.02	8	0.80	1	0.07	3	0.57	3	0.12	1	0.04
Սյունիք	5	4.33	5	4.33	0	0.00	0	0.00	13	95.88	7	95.09	0	0.00	3	0.46	3	0.33
Վայոց Ձոր	1	0.06	0	0.00	0	0.00	1	0.06	14	6.06	6	5.23	0	0.00	7	0.80	1	0.03
Տավուշ	2	0.12	0	0.00	1	0.07	1	0.05	21	8.97	10	8.29	0	0.00	5	0.60	6	0.08
Ընդամենը	33	7.54	5	4.33	10	2.31	18	0.89	222	195.83	82	185.17	5	0.70	67	5.44	68	4.52

2012թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 66 գործարք /33.38 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. դեկտեմբերին, 2011թ. դեկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 36.0%-ով: Ընդ որում, Երևանում՝ նվազել է 78.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 29.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 21.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 36.8%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 38.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 37.5%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. դեկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագ րյն	Սուսվել ագոյն	Միջին			Նվազագ րյն	Սուսվել ագոյն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	0.93	60.0	60.0	60.0	36	16.51	365.0	12000.0	3645.7
Ապարան						8	3.52	86.5	2727.3	715.5
Թային						60	634.82	93.6	5494.5	632.5
Ծաղկահովիտ						12	21.41	79.5	1000.0	262.0
Արարատի մարզ										
Արտաշատ	6	1.14	152.8	2047.5	808.8	55	14.98	335.1	10833.3	2760.0
Մասիս	4	1.42	88.6	230.9	145.0	17	11.95	200.0	11904.8	3200.0
Վեդի	3	3.28	153.9	156.2	155.0	32	43.25	207.0	10795.1	1853.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	5.38	60.5	1042.1	551.3	77	52.89	294.3	9090.0	1478.7
Բաղրամյան	2	1.73	70.3	70.3	70.3	13	19.71	90.6	2561.1	772.5
Վաղարշապատ	6	7.26	60.5	1247.1	376.3	36	50.35	444.4	11764.7	2451.9

Գեղարքունիքի մարզ										
Գավառ						123	37.73	199.8	1875.0	410.0
Ճամբարակ	1	0.05	1526.0	1526.0	1526.0	2	7.82	60.5	953.3	345.2
Մարտունի						1	0.22	51.1	2850.0	735.5
Սևան								52.2	2134.8	318.5
Վարդենիս						5	3.67	41.2	2575.1	403.5
Լոռու մարզ										
Ալավերդի						3	1.24	170.4	6424.2	618.0
Գուգարք						3	1.55	234.6	6065.9	751.3
Սպիտակ	3	1.19	162.8	191.4	181.5	1	0.13	250.0	5555.5	732.3
Ստեփանավան						15	12.69	90.6	1686.6	308.2
Տաշիր						1	2.32	45.3	1384.4	150.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	24	33.84	70.0	1224.6	325.1	29	6.57	279.3	11942.7	4485.0
Եղվարդ	3	3.19	148.6	1052.8	474.7	48	35.52	174.4	11971.8	2687.2
Հրազդան	3	17.08	122.5	302.9	242.7	25	7.31	130.5	10256.4	1760.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.07	120.8	120.8	120.8	6	3.86	252.0	1693.1	605.0
Ամասիա						2	8.49	40.9	261.0	128.5
Անի						22	21.62	110.6	546.9	372.0
Աշոցք						1	0.71	58.5	215.8	126.1
Արթիկ						6	5.84	79.4	1428.6	395.1
Սյունիքի մարզ										
Գորիս	1	3.00	137.5	137.5	137.5	8	6.36	92.6	1023.2	715.3
Կապան	6	92.09	38.5	123.8	52.7	2	1.00	120.0	841.6	350.0
Մեղրի						1	0.42	193.0	3000.0	725.5
Սիսիան						33	44.31	46.3	1977.4	530.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						8	1.39	125.0	10000.0	1900.0
Վայք	6	5.23	68.9	1262.4	466.7	3	2.52	58.8	1430.7	625.0
Տավուշի մարզ										
Բերդ						6	1.65	213.3	3783.8	675.3
Իջևան	8	7.75	80.1	2300.0	1396.3	3	1.51	267.5	9454.5	1235.5
Դեկտեմբերյան	2	0.54	718.0	722.8	720.4	13	9.29	46.7	7368.4	860.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. դեկտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						15	13543.0	130.7	22200.0	2575.0
Ապարան	3	72.0	558.3	558.3	558.3	1	2520.0	124.1	609.6	389.2
Թալին								63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	5	5427.0	351.3	849.6	748.0	15	14150.7	173.9	7140.3	894.2
Մասիս	6	4424.1	673.2	830.3	754.6	25	18969.3	187.5	25000.0	1209.0
Վեդի	3	1726.7	158.2	1545.0	1007.8	15	14930.0	126.1	5000.0	661.0

Արմավիրի մարզ										
Արմավիր						27	29416.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան	2	2137.0	148.3	154.2	151.3	3	3710.0	100.0	833.3	239.1
Վաղարշապատ						33	27354.8	197.4	26528.4	1527.0
Գեղարքունիքի մարզ										
Գավատ	1	232.0	258.6	258.6	258.6	10	11122.3	186.6	1084.3	670.0
Ճամբարակ						2	4380.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	5	6000.0	219.8	219.8	219.8	12	15208.7	119.3	5000.0	280.5
Սևան	4	4344.4	205.2	1472.1	580.0			240.0	3110.4	309.5
Վարդենիս						1	1847.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	1	100.0	605.0	605.0	605.0			114.3	1388.9	216.6
Գուգարք	6	243.5	1300.0	2202.1	1750.0	7	4876.4	77.9	14083.3	1152.0
Սպիտակ						1	2210.0	104.9	1348.3	206.0
Ստեփանավան						1	910.0	88.2	1666.7	175.5
Տաշիր						1	550.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	8	6703.2	641.0	5205.5	1609.7	35	24753.7	264.5	35353.5	1977.0
Եղվարդ	4	3102.9	891.0	2861.4	2069.4	21	15628.4	173.6	27000.0	2853.6
Հրազդան						6	3813.0	117.7	34848.5	1317.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	958.0	262.6	1980.0	1121.3	8	5450.5	113.6	18750.0	332.5
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						8	9627.2	67.9	180.6	164.3
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	1	200.0	253.0	253.0	253.0	5	4324.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	318.0	2200.0	2200.0	2200.0			112.2	1700.0	367.8
Կապան	2	4305.0	110.4	110.4	110.4	1	980.0	67.9	2638.9	300.0
Մեղրի								68.5	632.9	203.5
Սիսիան						2	1760.0	123.5	875.0	204.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	5230.0	96.7	7659.6	501.1
Վայք	7	8016.6	244.8	1290.5	831.3	1	713.5	120.7	1448.3	208.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	112.0
Իջևան	5	6019.3	295.7	3000.0	2159.1	26	22133.3	74.1	14423.1	519.6
Դեկտեմբերյան								125.0	1948.1	225.0

2012թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 798 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.4%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 66.7%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2012թ. դեկտեմբերին, 2012թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 10.7%-ով, իսկ 2011թ. դեկտեմբերի համեմատ՝ 4.0%-ով:

2012թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 55 բնակարանների, 97 անհատական բնակելի տների, 325 հասարակական, 107 արտադրական նշանակության օբյեկտների, 195 հողերի և 19 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. դեկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 15 վարձակալության գործարքների, այդ թվում 8 միավոր /5.74 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2012թ. նոյեմբերի համեմատ աճել է 5 անգամ, իսկ 2011թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 25%-ով: 2012թ. դեկտեմբերին հանրապետությունում վարձակալված 6941.08 հա հողերից 10.20 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 6930.88 հա հողերից 6908.63 հա կազմում են

գյուղատնտեսական նշանակության, 6.25 հա արդյունաբերական օբյեկտների, 15.01 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 6619.60 հա, որից 6619.52 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2421 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.3%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. նոյեմբերի համեմատ աճել է 22.4%-ով, իսկ 2011թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 30.2%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.3%/, առանձնատների /25.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.7%/ և հողերի /7.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1307 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. նոյեմբերի համեմատ, աճել է 44.4%-ով, իսկ 2011թ. դեկտեմբերի համեմատ՝ 5.0%-ով:

2012թ. դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 259.34 հա հողեր, որից 27.33 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 80.2%-ը կամ 207.96 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 105.17 հա, որից 101.40 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. դեկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 207 գործարքներ, որից 141-ը՝ Երևանում: 2012թ. նոյեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 33.5%-ով, ընդ որում Երևանում՝ 54.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 3.1%-ով: 2011թ. դեկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 14.8%-ով, ընդ որում Երևանում աճել՝ 6.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 40.0%-ով:

2012թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2918 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. նոյեմբերի համեմատ աճել է 35.3%-ով, իսկ 2011թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 51.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.5%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե